ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ս-43» էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան **«28 » « 10 » 2026թ. Ժամը 11:00**

ՀՀ ՆԳՆ 2026թ. կարիքների համար **կենցաղային ապրանքների** ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ս-43 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման նիստում արձանագրվեց՝

1. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ս-43 ծածկագրով գնման ընթացակարգին **նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ «ИП Горушин Александр Олегович»-ի** կողմից ներկայացրած հայտում առկա է եղել անհամապատասխանություններ՝ փաստաթղթերը կազմված չեն եղել հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

21.10.2026 թվականին **«ИП Горушин Александр Олегович»-ին** տրվել է մեկ /1/ աշխատանքային օր, անհամապատասխանությունները շտկելու համար:

«ИП Горушин Александр Олегович»-ը ժամանակին, պատշաճ կերպով կատարել է շտկումները:

Գնահատող հանձնաժողովը **«ИП Горушин Александр Олегович»-ը** հայտերը գնահատեց բավարար և որոշեց շարունակել ընթացակարգը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ս-43 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝ **«ИП Горушин Александр Олегович»-ին**:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև *10-րդ օրացուցային օրը ներառյալ* ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո, «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում **«ИП Горушин Александр Олегович»-ին** կառաջարկվի կնքել **կենցաղային ապրանքների** ձեռքբերման գնման պայմանագիր:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի <u>Նախագահ</u>՝
ՀՀ ՆԳՆ ՏՎ ԿԾ բաժնի պետի ժ/պ Ի. Սաֆարյան

<u>Հանձնաժողովի անդամներ</u>՝
ՏՎ ԿԾԲ առաջատար մասնագետ Հ. Հովհաննիսյան
ՏՎ ԿԾԲ ճարտարագետ Լ. Կարապետյան

Քարտուղար՝
ՏՎ ԳՀ բաժնի գլխավոր մասնագետ Ս. Մելքոնյան